ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը հուլիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Հուլիսի 5-ի՝
ՀՀ Սահմանադրության օրվա առիթով

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց ազատ ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Մայր օրենքի ընդունումը նշանակալից իրադարձություն էր նորանկախ պետականության ամրապնդման գործում: Այս հիմանարար փաստաթղթով առաջնահերթ սահմանվում են մեր երկրի կառավարման ելակետային դրույթները, որոնցում որոշիչ դեր ունի Հայաստանի Հանրապետության ժողովուրդը:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվա առիթով ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս: Երկրի հիմնական օրենքը մարդու իրավունքների, ազատությունների պաշտպանության գլխավոր երաշխավորն է և առաջնային նախապայման իրավահավասար ու համերաշխ հասարակության կայացման գործում: Որպես քաղաքացի և ՏԻՄ ներկայացուցիչ անվերապահորեն առաջնորդվելով Սահմանադրությամբ՝ կարևորում եմ յուրաքանչյուրիս օրինապահ գործելաոճը, սահմանադրական կարգի նկատմամբ վստահությունն ու դրա անառարկելի կիրառումը՝ ի շահ մեր պետության զարգացման ու բարօրության:

Մեր համայնքի, մեր հայրենիքի վաղվա օրվա նկատմամբ լավագույն ակնկալիքներով կրկին շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր պետական տոնի կապակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ